# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

**«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «Մառա և դուստրեր» ՍՊԸ-ի միջև 2025թ. օգոստոսի 1-ին կնքված N ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/9-1 ծածկագրով «ՀՀ Տավուշի մարզի Իջևանի թիվ 4 դպրոցի վերանորոգում», «ՀՀ Տավուշի մարզի Տավուշի միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Տավուշի մարզի Բերդի թիվ 3 հիմնական դպրոցի վերանորոգում», «ՀՀ Շիրակի մարզի Լեռնակերտի միջնակարգ դպրոցի վերանորոգում» ծրագրերի ընթացքում հեղինակային հսկողության իրականացման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ք. Երևան «11» 03 2026թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Մառա և դուստրեր» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Մ. Հունյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի **2025թ. օգոստոսի 1-ին կնքված N ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/9-1 ծածկագրով «ՀՀ Տավուշի մարզի Իջևանի թիվ 4 դպրոցի վերանորոգում», «ՀՀ Տավուշի մարզի Տավուշի միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Տավուշի մարզի Բերդի թիվ 3 հիմնական դպրոցի վերանորոգում», «ՀՀ Շիրակի մարզի Լեռնակերտի միջնակարգ դպրոցի վերանորոգում» ծրագրերի ընթացքում հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման** պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետի դրույթը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի Հավելված թիվ 2-ը **ՀՀ Շիրակի մարզի Լեռնակերտի միջնակարգ դպրոցի** մասով շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելվածի 1-ի:
2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:
3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:
4. Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:
5. Սույն Համաձայնագրի դրույթները տարածվում են Պայմանագրի կնքման պահից հետո ծագած հարաբերությունների վրա:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ** | **«Մառա և դուստրեր» ՍՊԸ** |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | **Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բուզանդի 1/3** |
| ՀՎՀՀ՝00846441 | **ՀՎՀՀ՝ 02700688,** |
| Ձափաբաժին 4 Հ/Հ՝900011058543 Կենտրոնական գանձապետարան | **Բանկ՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ՝ 2470100309110000** |
| Գործադիր տնօրեն | **Տնօրեն՝ Մ.Հունյան** |
| Ս. Բաղինյան | |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված N 1
**2025թ. օգոստոսի 1-ին կնքված**
**N «ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/9-1»** ծածկագրով
ծառայությունների գնման պայմանագրի
« 11 » 03 2026թ.
կնքված Համաձայնագիր 2-ի

Հավելված N 2
2025թ օգոստոսի 1-ին կնքված
ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/9-1 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | ԳՄԱ ծածկագիրը՝ (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 4 | 98111140/69 | «ՀՀ Շիրակի մարզի Լեռնակերտի միջնակարգ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն | - | - | 1 183 278 | 1 183 278 | 1 183 278 | 1 183 278 | 1 183 278 | 1 183 278 | 1 183 278 | 1 183 278 | 1 183 278 | 1 183 278 | 1 183 278 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

***Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ***
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Զափաբաժին 4 Հ/Հ՝900011058543

Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Ս. Բաղինյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Մառա և դուստրեր» ՍՊԸ**

Հասցեն՝ Երևան, Բուզանդի 1/3

ՀՎՀՀ՝02700638
Հ/Հ՝ ԱՇԲ 247010030911000О
Տնօրեն՝

Մ. Ռոմանյան

/ստորագրություն/
Կ.Տ